

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N°1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2021-2022 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

24 սեպտեմբերի 2021թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցության համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը: **Զեկուցող՝ Ս. Վարդապետյան**
2. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, ք.գ.դ. պրոֆեսոր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանի հեղինակած (համահեղինակ՝ Աննա Շիրինյան) Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարանի տպագրության երաշխավորման հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**
3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցության համար Ֆարմացիայի ինստիտուտի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածուի առաջադրման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի նախագահ, ք.գ.թ., ղոցենտ Ս. Վարդապետյանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն

մասին, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը՝ որպես ԵՊՀ հիմնադրամի լիազոր մարմին, նախաձեռնել է հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի ձևավորման գործընթաց, որի նպատակով անհրաժեշտ է պրոֆեսորադասախոսական անձնակազմից առաջադրել անդամության մեկ թեկնածու:

Ելույթ ունեցան նաև գիտխորհրդի անդամներ՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ., դոցենտ Հ. Սիմոնյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Է. Սեկոյանը, Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, ովքեր առաջարկեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Սերոբի Սաղյանի թեկնածությունը՝ հաշվի առնելով վերջինիս հարուստ գիտակրթական և վարչակազմակերպական գործունեությունը և մարդկային բարձր որակները:

Որոշեցին՝ (բաց քվեարկությամբ) միաձայն առաջադրել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Սերոբի Սաղյանի թեկնածությունը՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին անդամակցելու համար:

2. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. պրոֆեսոր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանի հեղինակած (համահեղինակ՝ Աննա Շիրինյան) Ապացուցողական բժշկության տերմինների բացատրական բառարանի տպագրության երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար ք.գ.թ Անի Դադայանին, ով ներկաներին հաղորդեց, որ Ռուբեն Հովհաննեսյանի կողմից հեղինակած բառարանը ենթարկվել է ինչպես ներամբիոնային, այնպես էլ՝ արտաքին գրախոսման՝ ՀՀ Լեզվի կոմիտե և ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ:

ՀՀ Լեզվի կոմիտեի լեզվական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետներ՝ Գուրգեն Միքայելյանը և Երազիկ Գրիգորյանը, ողջունելով և խրախուսելով բառարանի հեղինակների նախաձեռնությունը, այնուամենայնիվ, գտնում են, որ բառարանում կան քերականական, լեզվատրամաբանական, շարադասական անճշտություններ, որոնք ուղղելուց հետո միայն այն կարելի է հրատարակել:

ՀՀ ԱՆ ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի մասնագետների կողմից կատարված մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են լեզվաոճական որոշակի դիտողություններ, որոնք ընդունվել են հեղինակների կողմից:

Նրանք գտնում են, որ վերը նշված բառարանի տպագրությունը կնպաստի ինչպես բժշկագիտության և բժշկական կրթության, այնպես էլ՝ գործնական առողջապահության առաջընթացին:

Որոշեցին՝ (միաձայն) հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի և բժշկության ոլորտի մասնագետների համար, այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով) համալսարանի միջոցների հաշվին:

3. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ներկայումս Նազելի Չարյանի և Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակ են ստանում «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողներ Ռուբեն Էդուարդի Իսրայելյանը և Էմմա Արմենի Մարկոսյանը, ովքեր գերազանցությամբ շարունակում են իրենց ուսումը մագիստրատուրայում:

Ա. Դադայանը տեղեկացրեց, որ Էմմա Մարկոսյանը ցանկություն է հայտնել մասնակցել Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայի ուսանողների համար «Լիկվոր» և «Արփիմեդ» ընկերությունների կողմից սահմանված անվանական կրթաթոշակների մրցույթին և հրաժարվում է Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակից, ուստի անհրաժեշտ է ներկայացնել մեկ այլ ուսանողի թեկնածություն՝ Լևոն Ռոտինյանի անվան անվանական կրթաթոշակի համար: Ելույթ ունեցան գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր առաջարկեցին «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Ահարոնի Եգորյանի թեկնածությունը, ով չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմությամբ շարունակում է իր ուսումը (ՄՈԳ>19,5):

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

2.1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանող
Ռուբեն Էդուարդի Իսրայելյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:

2.2. Ներկայացնել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
Սոնա Ահարոնի Եգորյանին՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակի:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ,

ք.գ.թ., դրցենս՝

Ս. Վարդապետյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան